

## Արձանագրություն թիվ 4

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ փետրվարի 2-ին

Օրակարգում

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան-Ներկայացնում այսօրվա օրակարգը: Բոլորդ ծանոթ եք օրակարգին, եթե առաջարկություններ չկան անցնեք օրակարգի առաջին հարցին:

1. Քննաշրջանի արդյունքների քննարկմանը: Քննաշրջանի ավարտից հետո վիճակն այնքան էլ միախառն չէ: Մենքի անվտանգություն բաժնի 1-ին կուրսի ուսանողների 50%-ը պարտք ունի: Ընդորում պարտքերի հիմնական մասը «Բարձրագույն մաթեմատիկա» առարկայից. 9 ուսանողներից երեքը 20 կրեդիտ և ավելի պարտք ունեն: Նույն անմիախառն վիճակում են գտնվում երրորդ կուրսեցիները նրանցից երեքը՝ չորս քննություններից անբավարար են ստացել, իսկ մյուս մասն էլ անբարար են 2-3 առարկաներից: 4-րդ կուրսեցիներից 2-ը բոլոր քննություններից անբավարար են ստացել, իսկ 4 ուսանող առնվազն 2 առարկայից ունեն լուծարք:

Գրեթե նույն վիճակում են գտնվում քիմիայի ֆակուլտետի 3-րդ կուրսի 4-ուսանողներ: Նման ուսանողների հետ պետք է աշխատել: Ինչ մոտեցումներ եք առաջարկում:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան- Ինչ ծրագրով են իրականացնում բարձրագույն մաթեմատիկա առարկայի ուսուցումը: Միգուցե ավելի թեթև ծրագիր առաջարկվի:

Դեկանի տեղակալ, դոցենտ Ա.Ս.Գալստյան- Ծրագիրը քննարկվել և հաստատվել է Համապատասխան ֆակուլտետում և բավարարում է չափորոշիչներին, հետևաբար ծրագրի փոփոխություն չի կարելի կատարել: Ես ունեմ մեկ այլ առաջարկ՝ բացի կրթական ծրագրից իրականացնել նաև արտալսարանային ժամեր վճարովի հիմունքով: Համապատասխան ամբիոնից հրավիրելով դասախոս:

Դեկան Տ.Վ.Ղոչիկյան- Ով պետք է տա վճարը: Եթե կարծում եք ուսանողը, ապա դա կրերի արհեստականորեն ուսման վարձի բարձրացման:

Ռ.Պ.Մխիթարյան – Քիմիայի ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը մաթեմատիկայի ֆակուլտետի ուսխորհրդի նախագահի հետ համատեղ կարող են այդ հարցը կարգավորել: Իհարկե դասխոսական անձնակազմից դասընթացին հսկող

կլինի: Կարող են մաթեմատիկայի բարձր կուրսի ուսանողները որոշ ժամանակ օգնել առաջին կուրսեցիներին՝ լրացուցիչ պարապմունքներով:

Տ.Վ.Ղոչիկյան – այդ տարբերակը ընդունելի է: Նման արտաժամյա պարապմունքները դասավանդման հմտություն կտա մաթեմատիկայի ամբիոնի ուսանողներին, բայց պետք է քննարկել:

Տ.Վ.Ղոչիկյան - Անցնենք օրակարգի 2-րդ հարցին Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:

Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ

Ուսուցումը ընթանում է նորմալ, Ծրագրերը բավարարում են մագիստրոսական ծրագրի պահանջներին:

Տ.Վ.Ղոչիկյան – Անհրաժեշտ է արդյոք իրականացնել փոփոխություններ ծրագրերում, քանի որ ունենք մեկ բաժին քիմիա մասնագիտացմամբ:

Ն.Ա.Դուրգարյան- Մագիստրոսական ծրագրերում անցայլ տարի կատարվել են փոփոխություններ և բերվել են համապատասխան վիճակի:

Ա.Բ.Մարտիրոսյան – անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ: Մեզ մոտ նույնպես մագիստրոսական ծրագրերը թարմացվել են և բերվել են համապատասխան պահանջների: Սակայն մեկ խնդիր կա, դա մագիստրոսների վատ հաճախումն է, որը պայմանավորված է նրանց աշխատելու հետ:

Տ.Վ.Ղոչիկյան – դա ընդհանուր խնդիր է մագիստրատուրայի համար: Քանզի վարձի հարցը ուսանողը ինքն է ուզում լուծել: Դասախոսությունները և գրականությունը դրված է կայքում ուսանողը կարող է օգտվել, բայց լաբորատոր և գործնական աշխատանքների ժամանակ պետք է ներկա լինի: Միակ տարբերակը այդ խնդիրը լուծելու համար տեսնում եմ հետևյալ կերպ. որ յուրաքանչյուր բազային լաբորատորիա վերցնի մեկ- երկու մագիստրոս աշխատանքի: Նման տարբերակով կլուծվի և ուսանողի աշխատանքելու հարցը, և փորձարարական հմտություններ ձեռք բերելու հարցը:

Տ.Վ.Ղոչիկյան – անցնենք օրակարգի 3-րդ հարցին՝ Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկում: Սա իհարկե հարց չէ, այլ փաստի արձանագրում և քննարկում: Հունվարի 27-ին տեղի ունեցավ մագիստրոսական թեզերի պաշտպանությունը՝ 6 ուսանող «Սննդի անվտանգություն» բաժնից և 3 ուսանող «Քիմիա» բաժնից:

Սննդի անվտանգության բաժնի մագիստրոսական թեզերի պաշտպանության համար կազմված հանձնաժողովի նախագահը՝ Սննդի ոլորտի գործատուների միության նախագահ Գ. Մակարյանն էր: Նա առաջարկել է պաշտպանությունների ժամանակ հրավիրել համապատասխան ոլորտի ներկայացուցիչների և նրանց հետ քննարկել հետազոտությունների արդյունքները: Այս հանդիպումները կարող են հանդիսանալ շրջանավարտների համար աշխատանքային կարիերայի սկիզբ:

Ես վստահ եմ, որ Մակարյանի դիտարկումների հիման վրա պետք է առաջարկությունների փաթեթ կազմել և ներկայացնել ռեկտորատ:

Մենդի անվտագություն բաժնի մեկ ուսանող թեզը պաշտպանել է հեռահար տարբերակով «Էռագմուս +» ծրագրի շրջանակներում: Գոհար Առաքելյանը Ռումինիայից ներկայացրել է իր ստատիստիկ հետազոտությունների արդյունքները, որի արդյունքում հանձնաժողովի նախագահ Մակարյանը՝ առաջարկել է հանդիպել ՀՀ վերադառնալուց հետո:

“Քիմիա ” բաժնի մագիստրոսների համար կարող եմ ասել, որ բավականին լավ էին պատրաստվել և՛ փորձարարական, և՛ տեսական մասով: Սակայն ես առաջարկում եմ փորձարարական մասը հասցնել մաքսիմումի:

Տ.Վ.Ղուչիկյան – Ընթացիկ հարցերի բաժնում ունենք հետևյալ հարցերը:

Տ.Վ.Ղուչիկյան- Մեթոդ խորհրդում քննարկվել է անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի կողմից ներկայացված Գ. Պետրոսյանի, Ռ.Ադամյանի և Ի.Մարտիրոսյանի “Կոմպլեքս միացություններ” վերնագրով աշխատանքը: Ամբիոնը տվել է դրական կարծիք, մեթոդխորհրդի կարծիքը նույնպես դրական է: Սակայն կարծում եմ, որ այս աշխատանքը պետք է տրվի մասնագետի, ով կանի և համալրում և ուղղումներ և նոր կտրվի արտաքին գրախոսության: Պրոֆեսոր Հ.Գ.Խաչատրյան Խնդրում եմ շատ ուշադիր վերանայեք և տվեք Ձեր կարծիքը:

Դեկանի տեղակալ, դոցենտ՝ Ա.Ս.Գալստյան – 1. Հարգելի ամբիոնի վարիչներ, տեղյակ պահեք ամբիոններում, դասախոսներին, որ Փետրվարի տասից ԵՊՀ-ի կայքում տեղադրեն դասավանդող առարկաների ընդարձակ ծրագրերը և հարցաշարը, ինչպես նաև տեսասահիկներ:

2. Տեղեկացնում եմ, որ մարտի 5-6-7 –ին ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետում տեղի է ունենալու Քիմիա առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը: Տեսական մասը իրականացվելու է Չարենցի դահլիճում, իսկ 6-ին փորձարարական մասը քիմիայի ֆակուլտետի և ֆարմացիայի ինստիտուտի լաբորատորիաներում, փակումը՝ 7-ին Չարենցի դահլիճում: Ակնկալում եմ Ձեր մասնակցությունը:

Քիմիայի ֆակուլտետի դեկան  
նիստի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան